ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

22 փետրվարի շաբաթ 2025
տպագրության ԺԴ տարի

22
(3053)

100 դրամ

ք. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ԻՆՉ ԿՈՐՈՇՎԻ ՀՅԴ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻՆ

Հաջորդ շաբաթ՝ փետրվարի 26-ին, «Էլիտ պլազա» կենտրոնում տեղի կունենա ՀՅԴ ընդհանուր ժողով, որը, սովորաբար, տեղի է ունենում 4 տարին մեկ անգամ:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ ՀՅԴ-ականներն արդեն տեւական ժամանակ է պատրաստվում են այս ժողովին, որի ընթացքում քննարկվելու են «Դաշնակցության» առաջիկա անելիքները, ժողովին մասնակցող պատգամավորների կողմից գաղտնի քվեարկությամբ ընտրվելու է նաեւ ՀՅԴ գերագույն գործադիր մարմինը՝ բյուրոն:

Բյուրոյի նոր կազմի հաստատումից եւ հաջորդ 4 տարիների քաղաքականության մշակումից հետո ՀՅԴ Հայաստանի մարմինը ներկայացուցչական ժողովի ընթացքում ընտրում է Գերագույն Մարմնի նոր կազմը, որը գործում է 2 տարի ժամկետով: Ընդհանուր ժողովին ձայների երկու երրորդի մեծամասնությամբ ծրագրային կամ կանոնադրական փոփոխություններ կկատարվեն:

Մեր տեղեկություններով՝ ՀՅԴ ընդհանուր ժողովին հրավիրված են նաեւ տարբեր քաղաքական դեմքեր, պատգամավորներ:

Երեկ լուր տարածվեց այն մասին, որ ՔՊ խմբակցության պատգամավորները Վիեննայում հանդիպել են Թուրքիայի պատվիրակության անդամների հետ: Հանդիպումը կայացել է ԵԱՀԿ Խորհրդարանական վեհաժողովի շրջանակներում: ՔՊ խմբակցության պատգամավորներից թուրք պատգամավորների հետ հանդիպմանը մասնակցել են ՔՊ խմբակցության քարտուղար Արթուր Հովհաննիսյանը, ԱԺ արտաքին հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Սարգիս Խանդանյանը եւ պատգամավոր Մարիա Կարապետյանը: Իշխանական պատգամավորները իրենց սոցիալական էջերում ուրախ տրամադրությամբ, լայն ժպիտներով լուսանկարներ են հրապարակել թուրք պատգամավորների հետ: Իսկ թե ինչ է քննարկվել թուրքական կողմի հետ, դրա վերաբերյալ ՔՊ-ական պատգամավորները հայտնել են. «Երկկողմ հանդիպմանը քննարկվել է երկու երկրների միջեւ հարաբերությունների կարգավորմանը վերաբերող հարցեր, կարեւորվել է նաեւ տարածաշրջանի ճանապարհների եւ այլ ենթակառուցվածքների շուտափույթ ապաշրջափակումը եւ տնտեսական հարաբերությունների զարգացումը»:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում:

«Ժողովուրդ» օրաթերթին հայտնի դարձավ, որ ամերիկահայ համայնքի երկարամյա ակտիվ գործիչ Ջորջ Աղջայանը ստանձնել է Հայ դատի Ամերիկայի հանձնախմբի նախագահի պաշտոնը՝ փոխարինելով տեւական ժամանակատաւիված այդ պատասխանատվությունը ստանձնած Ռաֆֆի Համբարյանին: Այս մասին հայտնում է ՀՅԴ Բյուրոյի Հայ դատի կենտրոնական գրասենյակը: Անդրադառնալով իր նոր պատասխանատվությանը՝ Աղջայանը, մասնավորապես, նշել է. «Ինձ համար մեծ պատիվ է ստանձնել այս դերը հայ ժողովրդի համար այսքան կարեւոր ժամանակահատվածում: Մեր աշխատանքն առավել քան երբեւէ կենսական է, քանի որ մենք պայքարում ենք հանուն արցախահայության իրավունքների, պայքարում ենք Ադրբեջանին իր հանցագործությունների համար պատասխանատվության ենթարկելու եւ Հայաստանի երկարաժամկետ անվտանգությունն ու կենսունակությունն ապահովելու համար: Հայ դատի Ամերիկայի հանձնախումբը միշտ եղել է ամերիկահայության ամենաարդյունավետ ձայնը ԱՄՆ ինչպես արտաքին, այնպես էլ ներքին քաղաքականության մեջ, եւ ես անհամբեր սպասում եմ աշխատելու մեր տեղական մասնաճյուղերի, համայնքային ակտիվիստների եւ նվիրված ղեկավար թիմի հետ՝ ընդլայնելու մեր ազդեցությունը եւ առաջ մղելու մեր ընդհանուր գործը»: Նշվեց՝ Աղջայանը հաջորդում է Հայ դատի Ամերիկայի հանձնախումբը նվիրումով եւ ռազմավարական տեսլականով ղեկավարած Ռաֆֆի Համբարյանին:

«Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ փետրվարի 20-ին ՔՊ նախաձեռնող խմբի նիստն է տեղի ունեցել, որտեղ քննարկել են Գյումրիում եւ Փարաքարում մարտի 30-ին սպասվող ավագանու ընտրությունների հարցը: Նշենք, որ նախաձեռնող նիստը վարել են Երեւանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը եւ ՀՀ Կառավարության աշխատակազմի ղեկավար Արայիկ Հարությունյանը: Մեզ հայտնի դարձավ, որ ելույթ է ունեցել ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարար Նարեկ Մկրտչյանը, որը խոշորացված Փարաքար համայնքից է ու ՔՊ-ական Լյուդվիգ Գյուլնազարյանի պաշտոնի հովանավորն է: «Ժողովուրդ»-ի աղբյուրները փոխանցում են, որ ներքին կարգով Փարաքարի ընտրության «կուրատորը» Նարեկ Մկրտչյանն է, նա ՔՊ-ականներին ներկայացրել է՝ ինչ է արել, ինչ արդյունք ունի այս պահի դրությամբ: Ելույթով հանդես են եկել նաեւ ՏԿԵ նախարար Դավիթ Խուդաթյանը, Առողջապահության նախարար Անահիտ Ավանեսյանը, Փարաքար համայնքի ներկայիս պաշտոնակատար Լյուդվիգ Գյուլնազարյանը, Արմավիրի մարզպետ Արգիշտի Մեխակյանը: Տեղեկացանք նաեւ տեղեկացավ, որ Civic.am կայքի լրագրող Դավիթ Լեւոնյանը անդամագրվել է ՔՊ կուսակցությանը եւ երեկ տեղի ունեցած նախաձեռնող նիստում ելույթ է ունեցել: Դավիթ Լեւոնյանը «Ժողովուրդ»-ի հետ զրույցում հայտնեց, որ Civic.am լրատվական կայքից այս ամսվա վերջ դուրս է գալու: Հիշեցնենք, որ դեռեւս 2024 թ. հունիսին մի միջադեպ տեղի ունեցավ Խորհրդարանում Դավիթ Լեւոնյանի եւ պատգամավոր Լեւոն Քոչարյանի օգնական Արթուր Սուքոյանի միջեւ: Վեճի պատճառը Տավուշի թեմի առաջնորդ Բագրատ Սրբազանի վերաբերյալ Civic.am-ի աշխատակից Դավիթ Լեւոնյանի հայտարարություններն էին: Լեւոն Քոչարյանի օգնականը չի հերքել, որ հարվածել է լրագրողին՝ պնդելով, թե իր համար անընդունելի է եկեղեցուն թիրախավորելը:

ԺՈՂՈՎՐԴԻ ՀԵՏ

ԵՐԵՎԱՆՈՒՄ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ ՉՈՒՆԵՆ

«Ժողովուրդ» օրաթերթը տրանսպորտի թանկացման եւ այլ թեմաների շուրջ զրուցել է ավագանու անդամ Գեւորգ Ստեփանյանի հետ:

-Պարոն Ստեփանյան, հանդիպել եք «Ավտոբուս» ՓԲԸ-ի մամուլի խոսնակի հետ, ի՞նչ պարզաբանումներ ներկայացվեցին, ի՞նչ իրավունքով են վարորդները ուղեւորներին իջեցնում ավտոբուսից:

-Նրանք տեղում չեն՝ ո՛չ տնօրենը, ո՛չ փոխտնօրենը: Մեզ ընդունեց մամուլի խոսնակն ու ասաց, որ հարցեր կան, որ ինքը չի կարող ամբողջությամբ պատասխանել: Մարդը կոնկրետ, հստակ, ասաց, որ իրենք նման հրահանգ չեն տվել: Ես իր հարցին ի պատասխան ասել եմ՝ ներքին կարգով ավտոբուսի վարորդներին հրահանգ է տրվել քաղաքացիներին ստիպել վճարել: Հակառակ դեպքում իրենք չեն վարելու ավտոբուսները: Որոշ վարորդներ սադրանքների են տրվել, որոշ վարորդներ էլ ասել են՝ ոչ, մենք մեր գործն ենք անում, մենք վարելու ենք ավտոբուսները: Կրկնում եմ՝ «Ավտոբուս» ՓԲԸ-ն իր տնօրենության հետ իրավունք չունի ապօրինի հրամաններ տալ, նրանք միայն ավտոբուս վարելու համար են: Կոչ եմ անում բոյկոտը շարունակել, այն մեծ թափ է հավաքում, շարունակե՛ք նույն ձեւով, ձեր իրավունքներին պաշտպան եղեք, մի՛ լռեք, մի՛ հանդուրժեք, եւ նրանք խելոք կգան, ձեր կարծիքի հետ հաշվի կնստեն:

-Ավագանու իշխանական անդամների փոխանցմամբ՝ շուտով նոր նախաձեռնությամբ են հանդես գալու, որը կմտնի Ազգային ժողով: Ըստ նախաձեռնության՝ այն քաղաքացիները, որոնք տրանսպորտի գումարը չեն վճարի, կբոյկոտեն, ապա կենթարկվեն վարչական տույժի: Ի՞նչ կասեք այս մասին:

-Ժողովրդի «ծոցից» դուրս եկած ոչ լեգիտիմ իշխանությունները հասկացան, որ բոյկոտը մեծ թափ է հավաքում, մեր հայրենակիցներն ու քաղաքացիները մերժում են նրանց ամեն տեղ. թե՛ այս թանկացումները, թե՛ իրենց բերած ռեֆորմները, ոչ բարեփոխված տրանսպորտը: Իրենք գիտեն, որ ամեն տեղ մերժված են: Երեւան քաղաքում իշխանություն գոյություն չունի: Երեւանցիները դա հաստատեցին 2023 թվականին, իսկ հիմա՝ ավելի ուժգին:

Իսկ Դուք ծանո՞թ եք նախաձեռնությանը:

-Նախաձեռնությանը դեռ ծանոթ չեմ: Ես կարող եմ ասել, որ նոր նախաձեռնություն կներկայացնեն կամ ոստիկանությունը, կամ համայնքային նոր ծառայողներ կընդունեն աշխատանքի, որ մարդկանց ստիպեն տուգանվել:

Իրենք սկսել են ժողովրդին դիտել, որպես տուգանքի եւ տուգանվելու մատերիալ եւ ոստիկանության միջոցով դա անելու են: Մենք ամեն բանի պատրաստ ենք ժողովրդի աջակցությամբ, մենք ժողովրդի հետ ենք: Ինչ օրենք ուզում են՝ թող ընդունեն:

Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ԼՈՒՐԵՐ

ՉԻ ՄԱՍՆԱԿՑԵԼ ՀԱՆԴԻՊՄԱՆԸ

ՌԴ-ում ՀՀ դեսպան Գուրգեն Արսենյանը չի մասնակցել Սերգեյ Ռյաբկովի եւ ՀԱՊԿ անդամ պետությունների դեսպանների հանդիպմանը: Այս մասին Սպուտնիկ Արմենիային ասացին ՀՀ ԱԳՆ-ից:

«ՀՀ ԱԳՆ-ից ասացին, որ կոնկրետ ՀԱՊԿ ձեւաչափում մասնակցության հարցում փոփոխություն չկա, մասնակցություն չի եղել»:

Ռուսաստանի փոխարտգործնախարար Սերգեյ Ռյաբկովը Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության (ՀԱՊԿ) անդամ երկրների դեսպանների հետ քննարկել է ՌԴ-ի եւ ԱՄՆ-ի վերջին շփումները:

ՔՊ ՔԱՐՏՈՒՂԱՐԸ ԹԻՐԱԽԱՎՈՐԵԼ Է ՌՈՒՍԱՍՏԱՆԸ

ՔՊ-ական պատգամավորները շարունակում են իրենց անտրամաբանական քաղաքականությունը՝ մի՛ կողմից ավելի են վատթարացնում հայ-ռուսական հարաբերությունները, մյո՛ւս կողմից ՀՀ պետական շահի եւ զիջումների գնով փորձում են հարաբերություններ հաստատել թշնամական Թուրքիայի հետ:

Փետրվարի 20-ին Վիեննայում անցկացվող ԵԱՀԿ Խորհրդարանական վեհաժողովի ձմեռային նստաշրջանի ընթացքում ՀՀ ԱԺ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության քարտուղար Արթուր Պողոսյանը իր մեկ ու կես րոպեանոց ելույթի ընթացքում խոսելով նոր տեխնոլոգիաների եւ սոցիալական մեդիայի մասին, ասել է, որ «Եթե ժողովրդավար երկրներն այս գործիքներն օգտագործում են առավել թափանցիկ կառավարում իրականացնելու, առավել վստահելի ընտրական գործընթացներ կազմակերպելու համար, ապա ավտորիտար երկրների համար այս գործիքները կիրառվում են որպես զենք՝ հիբրիդային պատերազմներ վարելու եւ մեր ժողովուրդներին մանիպուլացնելու եւ վախեցնելու համար:

Հայաստանը հիբրիդային հարձակումների ենթարկվեց հատկապես 2020 թվականի պատերազմի ընթացքում, դրան հաջորդող շրջանում եւ շարունակում ենք առերեսվել այսօր:

Հայ ժողովրդին անդադար մատուցվում է կեղծ, վախեր առաջացնող տեղեկատվություն: Օրինակ, մենք կասեցրել ենք մի քանի ռուսալեզու հաղորդումների հեռարձակումը մեր երկրի տարածքում: Հիբրիդային հարձակումները հատկապես ակտիվանում են ընտրությունների նախաշեմին, դա ցույց է տվել ինչպես մեր փորձը, այնպես էլ Մոլդովայի եւ Վրաստանի վերջին ընտրությունների շուրջ առկա իրադարձությունները»:

Ավելի ուշ ԱԺ արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողովի նախագահ Սարգիս Խանդանյանը հրապարակեց Հայաստանի եւ Թուրքիայի պատվիրակությունների հանդիպումից լուսանկար՝ գրելով, որ հանդիպմանը քննարկվել են երկու երկրների միջեւ հարաբերությունների կարգավորմանը վերաբերող հարցեր, տարածաշրջանի ճանապարհների եւ այլ ենթակառուցվածքների շուտափույթ ապաշրջափակումանը եւ տնտեսական հարաբերությունների զարգացմանը վրաբերող հարցեր:

Միեւնույն ժամանակ, հենց նույն ԵԱՀԿ Խորհրդարանական վեհաժողովի ընթացքում ՀՀ ԱԺ «Հայաստան» խմբակցության դաշնակցական պատգամավոր Լիլիթ Գալստյանն իր ելույթի ընթացքում առաջարկել է ԵԱՀԿ մոնիթորինգային առաքելություն ուղարկել Բաքու՝ դիտարկելու հայ գերիների եւ ռազմաքաղաքական ղեկավարության նկատմամբ իրականացվող դատավարական ֆարսը:

Պատգամավորի պնդմամբ՝ այն կծառայի հետեւյալ նպատակներին՝

. Համոզվելու, թե որքանով է դատավարությունը համապատասխանում միջազգային իրավական չափանիշներին,

. Կապահովի դատական գործընթացների թափանցիկությունը,

. Կարտահայտի միջազգային հանրության հավատարմությունը Մարդու իրավունքներին

. Կահազանգի, որ մարդու իրավունքների ոտնահարումը չի կարող անհետեւանք մնալ:

ԵԱՀԿ ԽՎ միջամտությունը հստակ ազդանշան կլինի, որ միջազգային հանրությունը չի լռելու, իսկ Ադրբեջանը պիտի հաշվետու լինի իր գործողությունների համար:

Ի՞նչ է ստացվում

Հայաստանի իշխանությունը հստակ քայլերով թշնամացնում է Հայաստանը տարիների դաշնակից պետության հետ եւ բարեկամանում մեզ ցեղասպանած պետության հետ:

Թե ինչ հետեւանքներ կարող է ունենալ այս քաղաքականությունը, դժվար չէ կռահել:

ՀՈՒՐԻ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

«ՎԱԽ ԲՌՆԵԼՈՒ ՕՊԵՐԱՑԻԱՆ ՄԵԿՆԱՐԿԵԼ Է». Մ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԱԺ պատգամավոր Մարտուն Գրիգորյանը, ով պատրաստվում է մասնակցել Գյումրու արտահերթ ՏԻՄ ընտրություններին, Գյումրիի նախկին քաղաքապետ եւ այժմ՝ քաղաքապետի թեկնածու Վարդան Ղուկասյանի ձերբակալությանկապակցությամբ գրել է. «Վախ բռնելու մինի օպերացիաների մեկնարկը Գյումրիում տրված է:

Միսիան կատարված է, գովազդն ապահովված է,

Շոուների ընտրված ձեւաչափն էլ՝ դատապարտված է»:

ԳՆԱՀԱՏՈՒՄ Է ՀԱՄԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ

Միացյալ Նահանգներում Հայաստանի Հանրապետության դեսպան Լիլիթ Մակունցը հանդիպում է ունեցել Պենտագոնում, որի ընթացքում քննարկվել են Երեւան-Վաշինգտոն ռազմավարական գործընկերությանը եւ Հարավային Կովկասում խաղաղության գործընթացին վերաբերող հարցեր: Այս մասին նշված է ԱՄՆ-ում ՀՀ դեսպանի X-ի միկրոբլոգում կատարված գրառման մեջ:

«Հիանալի հանդիպում ունեցա Պենտագոնում: Խոսեցինք Հայաստան-ԱՄՆ ռազմավարական գործընկերության եւ Հարավային Կովկասում խաղաղության գործընթացի մասին: Հայաստանը գնահատում է ԱՄՆ պաշտպանության նախարարության հետ համագործակցությունը եւ ակնկալում է շարունակել մեր գործընկերությունը»,-նշված է Լիլիթ Մակունցի գրառման մեջ:

ԹՐԱՄՓԸ ԴԺԳՈՀ Է ԶԵԼԵՆՍԿՈՒ ՊԱՀՎԱԾՔԻՑ

ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփը դժգոհ է Զելենսկու պահվածքից եւ որոշ դեպքերում՝ միանգամայն իրավացիորեն՝ հայտարարել է ԱՄՆ պետքարտուղար Մարկո Ռուբիոն՝ հիշեցնելով, որ նախկին նախագահ Ջո Բայդենը նույնպես տարաձայնություններ ուներ Զելենսկու հետ: Ռուբիոն նշել է, որ Ուկրաինայի նախագահի որոշ հայտարարություններ Վաշինգտոնում զայրույթ են առաջացնում: «Մենք նրա հետ քննարկել ենք հանքային հանածոների հարցը, առաջարկել համագործակցություն, նա համաձայնել է, ասել, որ այն կներկայացնի խորհրդարանի քննարկմանը, իսկ երկու օր անց հրապարակավ մերժել է այդ գաղափարը»,-ընդգծել է Ռուբիոն:

Նրա խոսքով՝ Թրամփի դիրքորոշումն Ուկրաինայի հարցում մնում է անփոփոխ, սակայն Սպիտակ տան ղեկավարը հարգանք է պահանջում:

ԱՄՆ պետքարտուղարը նշել է, որ Էր Ռիադում Ռուսաստանի ներկայացուցիչների հետ հանդիպման ժամանակ Ուկրաինայի հետ կապված տարածքային հարցերը չեն քննարկվել: Քննարկվել են Ուկրաինայում խաղաղ գործընթացի հեռանկարները, այլ ոչ թե հնարավոր համաձայնագրի պայմանները:

Ռուբիոյի խոսքով՝ ԱՄՆ-ն շարունակում է խորհրդակցությունները եվրոպացի դաշնակիցների եւ Կիեւի հետ: «Ուկրաինացիները գիտեն մեր մտադրությունները, մենք կանոնավոր կերպով ամեն ինչ քննարկում ենք նրանց հետ»:

ՀՐԱԺԱՐՎՈՒՄ Է «ԱԳՐԵՍՈՐ» ԱՆՎԱՆԵԼ

Financial Times-ը հայտնում է, որ ԱՄՆ-ը դեմ է Geu-ի հայտարարության մեջ Ռուսաստանին «ագրեսոր» անվանելուն՝սպառնալով խափանել միասնության ավանդական ցուցադրումը: Այս մասին հրապարակմանը հայտնել են արեւմտյան հինգ պաշտոնյաներ:

FT-ն գրում է, որ տարաձայնությունները ծագել են այն բանից հետո, երբ Թրամփը Զելենսկին անվանել է «բռնապետ» եւ առաջարկել Ռուսաստանին վերադարձնել Geu: Հրատարակության աղբյուրների համաձայն՝ ամերիկացի հատուկ ներկայացուցիչները դեմ են «ռուսական ագրեսիա» արտահայտությանը եւ նմանատիպ ձեւակերպումներին, որոնք Geu-ի առաջնորդները 2022 թվականից օգտագործում են ռազմական գործողությունները նկարագրելու համար, հայտնում է BBC-ն:

Բացի այդ, ըստ FT-ի, Զելենսկու մասնակցությունը Geu-ի վիրտուալ գագաթնաժողովին նույնպես դեռ համաձայնեցված չէ:

BBC–Ն ՓԱԿՈՒՄ Է ԲԱՔՎՈՒՄ ԻՐ ԳՐԱՍԵՆՅԱԿԸ

BBC-ն Ադրբեջանի կառավարության առաջարկով մտադիր է փակել Բաքվում BBC News ադրբեջանական գրասենյակը: Այս մասին հայտնում է APA գործակալությունը՝ հղում անելով BBC-ի երեկ հրապարակած հայտարարությանը:

Հրապարակման մեջ ասվում է, որ ընկերությունը որոշել է փակել գրասենյակը Բաքվում Ադրբեջանի կառավարությունից բանավոր հանձնարարականներ ստանալուց հետո:

Ինչպես հաղորդվում է, BBC-ի ադրբեջաներեն ծառայությունը գործում է 1994 թվականից:

ԱՄՆ ԴԱՏԱՐԱՆԸ ՄԵՐԺԵԼ Է

ԱՄՆ վերաքննիչ դատարանը թույլ չի տա նախագահ Դոնալդ Թրամփի վարչակազմին դադարեցնել ներգաղթյալների երեխաներին ծննդյան իրավունքով քաղաքացիության տրամադրումը: «Արմենպրես»-ի փոխանցմամբ՝այս մասին հայտնում է CNN-ը:

Սան Ֆրանցիսկոյում գտնվող ԱՄՆ 9-րդ շրջանի Վերաքննիչ դատարանը ուժի մեջ է թողել որոշումը, որն արգելում է Թրամփին սահմանափակել ծննդյան իրավունքով քաղաքացիության տրամադրումը՝ չնայած Արդարադատության նախարարության հայցին: Սա նշանակում է, որ հարցը կարող է քննվել ԱՄՆ գերագույն դատարանում:

Ավելի վաղ ծննդյան իրավունքով քաղաքացիության տրամադրումը դադարեցնելու մասին Թրամփի հրամանագիրն արգելափակել էին Մերիլենդի, Մասաչուսեթսի եւ Նյու Հեմփշիրի դատավորները:

Հունվարի 20-ին՝ Սպիտակ տուն վերադառնալու առաջին օրը, Թրամփն ԱՄՆ գործակալություններին հանձնարարել էր հրաժարվել Միացյալ Նահանգներում ծնված երեխաների քաղաքացիությունը ճանաչելուց, եթե նրանց մայրը կամ հայրը ԱՄՆ քաղաքացի կամ օրինական ռեզիդենտ չեն:

ԲԱՔՎԻ ԴԱՏԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԸ

ՄՈՆԻՏՈՐԻՆԳԱՅԻՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր, ԵԱՀԿ ԽՎ պատվիրակության անդամ Լիլիթ Գալստյանը ԵԱՀԿ ԽՎ ձմեռային նստաշրջանում հանդես է եկել ելույթով՝ առաջարկելով ԵԱՀԿ ԽՎ մոնիտորինգային առաքելություն ուղարկել Բաքու՝ դիտարկելու հայ գերիների եւ ռազմաքաղաքակ ղեկավարության նկատմամբ ընթացող դատավարական ֆարսը: Ստորեւ ներկայացվում է Լիլիթ Գալստյանի ելույթը.

«Հարգելի գործընկերներ,

Իմ խոր մտահոգությունն եմ փոխանցում Բաքվում գերեվարված հայ ռազմագերիների, այդ թվում՝ Արցախի ռազմաքաղաքական ղեկավարության պատանդառության առնչությամբ: Նրանք 2023 թ. սեպտեմբերին տեղի ունեցած ադրբեջանական ագրեսիայի զոհերն են. ագրեսիա, որի արդյունքում 120,000 էթնիկ հայեր բռնի տեղահանության ենթարկվեցին:

Մեր բոլորի անհետաձգելի ուշադրությունն եւ վերաբերմունքը պետք է ուղղել 2025-ի հունվարին Բաքվում մեկնարկած դատավարությունների ուղղությամբ, որոնք լրջագույն հարցականի տակ են դնում արդար դատավարություն իրականացնելու Բաքվի կամքը: Հակառակ այն իրողության, որ Ադրբեջանն անդամակցում է Մարդու իրավունքների Եվրոպական Կոնվենցիային եւ Քաղաքական եւ Քաղաքացիական իրավունքների Միջազգային խարտիային, ընթացող դատավարությունները մի շարք լրջագույն խախտումներ են արձանագրում:

1. Անառարկելի փաստեր են ի հայտ եկել, որ կալանավորվածները կտտանքների են ենթարկվում: Նրանց դատում են որպես ահաբեկիչների սոսկ հայ լինելու հանգամանքով:

2. Հակառակ բաց դատավարության մասին Բաքվի հայտարարության՝ միջազգային կազմակերպությունների, այդ թվում՝ լրատվամիջոցների մուտքը արգելված է:

3. Հայտնի հումանիստ Ռուբեն Վարդանյանին, ով երբեք զինվորական կենսագրություն չի ունեցել, դատում են ռազմական դատարանում, իսկ նրան ներկայացվող մեղադրանքը մոտենում է 200 տարվա դատապարտման: Նրան իր մեղադրանքին ծանոթանալու խիստ սահմանափակ հնարավորություն է տրվել:

Ելնելով այս իրողություններից, ես պաշտոնապես առաջարկում եմ, որպեսզի ԵԱՀԿ ԽՎ-ն դիտորդական առաքելություն իրականացնի՝ դիտարկելու այս դատավարությունները:

Այն կծառայի հետեւյալ նպատակներին՝

-Համոզվելու, թե որքանով է դատավարությունը համապատասխանում միջազգային իրավական չափանիշներին,

-Կապահովի դատական գործընթացների թափանցիկությունը,

-Կարտահայտի միջազգային հանրության հավատարմությունը Մարդու իրավունքներին

-Կահազանգի, որ մարդու իրավունքների ոտնահարումը չի կարող անհետեւանք մնալ

ԵԱՀԿ ԽՎ միջամտությունը հստակ ազդանշան կլինի, որ միջազգային հանրությունը չի լռելու, իսկ Ադրբեջանը պիտի հաշվետու լինի իր գործողությունների համար»:

Է. Մ.

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՃԱՊՈՆԻԱՅԻ ՄԻՋԵՎ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ

Հանրապետության նախագահ Վահագն Խաչատուրյանն ընդունել է Հայաստանում Ճապոնիայի արտակարգ եւ լիազոր դեսպան Առկի Յուտակային:

Նախագահը ողջունել է դեսպանին եւ շնորհավորել Ճապոնիայի Ազգային տոնի՝ Կայսեր ծննդյան օրվա առթիվ, մաղթելով Ճապոնիայի ժողովրդին բարգավաճում եւ հաջողություններ: Դեսպան Յուտական իր շնորհակալությունն է հայտնել ընդունելության եւ բարեմաղթանքների համար:

Հանդիպման ընթացքում քննարկվել են Հայաստանի եւ Ճապոնիայի միջեւ գործընկերության հետագա զարգացման ուղիները, ինչպես նաեւ համատեղ նախագծերի իրականացման հնարավորությունները: Հատուկ ուշադրություն է դարձվել քաղաքական, տնտեսական, բարձր տեխնոլոգիաների ոլորտներում փոխգործակցության ակտիվացմանը:

Երկու կողմերն էլ ընդգծել են բարձր մակարդակի քաղաքական երկխոսության, փոխայցելությունների եւ խորհրդարանական դիվանագիտության զարգացման կարեւորությունը: Բացի այդ, կողմերը փոխանակել են մտքեր տարածաշրջանային խաղաղության եւ ժողովրդավարական ինստիտուտների ամրապնդման վերաբերյալ:

Նախագահ Խաչատուրյանը շնորհակալություն է հայտնել Ճապոնիայի կառավարությանը եւ իշխանություններին՝ տարածաշրջանում խաղաղության հաստատման եւ հիմնախնդիրները բանակցային եղանակով լուծելու գործում նրանց հստակ դիրքորոշման համար:

ԽՈՑԵԼԻ ԵՎ ԱՆՊԱՇՏՊԱՆ ԵՆ

Ռուբեն Վարդանյանի բարձրաձայնած խնդիրները ոչ միայն արձանագրում են մեր հայրենակիցների անպաշտպան լինելու հանգամանքի մասին, այլ նաեւ այն, որ Ադրբեջանը «դատավարությունն» օգտագործում է ՀՀ-ից նոր զիջումներ կորզելու համար: Այս մասին ֆեյսբուքի իր էջում գրել է ԱԺ «Պատիվ ունեմ» խմբակցության քարտուղար Տիգրան Աբրահամյանը:

«Արցախի նախկին պետնախարար Ռուբեն Վարդանյանը Բաքվում ընթացող «դատավարության» գործընթացի ապօրինությունների բազմաթիվ դրսեւորումներով պայմանավորված հացադուլ է հայտարարել:

Ավելի վաղ Վարդանյանը հայտարարել էր, որ չնայած այն հանգամանքին, որ ինքը հրաժարվել է ցուցմունքներ տալուց, իր անունից կեղծ ցուցմունքներ է գրվել, շինծու գործ կառուցվել:

Հասկանալի է, որ որոշակի փոփոխություններով, վերոնշյալ ադրբեջանական ձեռագիրը տարածվում է նաեւ Բաքվի բանտերում գտնվող մեր մյուս հայրենակիցների վրա:

Ռուբեն Վարդանյանի բարձրաձայնած խնդիրները ոչ միայն արձանագրում են մեր հայրենակիցների խիստ խոցելի եւ անպաշտպան լինելու հանգամանքի մասին, այլ ամրապնդում այն մոտեցումը, որ Ադրբեջանը՝ՀՀ-ի դեմ ագրեսիվ գործողությունների նախապատրաստման շրջանակներում, «դատավարությունն» օգտագործում է որպես մահաբեր զենք՝ Հայաստանին շանտաժի ենթարկելու եւ նոր զիջումներ կորզելու համար»,-գրել է նա:

ՆԵՐԿԱՅԱՑՐԵԼ Է «ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԽԱՉՄԵՐՈՒԿ» ՆԱԽԱԳԻԾԸ

Աշխատանքային այցով Իտալիայում գտնվող ՀՀ ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանը մասնակցել է Իտալիայի Սենատում անցկացված ԵՄ քաղաքականությունների հանձնաժողովի՝ Հայաստանին նվիրված լսումներին: Այս մասին հայտնում են ԱԺ-ից:

ՀՀ ԱԺ նախագահը հանդես է եկել ելույթով, հանգամանալից ներկայացրել հայաստանյան դիրքորոշումը տարբեր արդիական հարցերի շուրջ, ինչպես նաեւ պատասխանել իտալացի խորհրդարանականներին հետաքրքրող հարցերին:

Քննարկվող թեմաների առանցքում են եղել խաղաղության պայմանագրին վերաբերող հարցերը, ՀՀ կառավարության կողմից նախաձեռնած «Խաղաղության խաչմերուկ» նախագիծը, Հայաստանի՝ եվրոպական ինտեգրման օրակարգը, Հայաստանում ընթացող ժողովրդավարական բարեփոխումների առաջնահերթությունները, ինչպես նաեւ Ադրբեջանում պահվող հայ գերիների հայրենադարձության խնդիրը:

ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ

ՀԱՓՇՏԱԿԵԼ Է ԱՌԱՆՁՆԱՊԵՍ ԽՈՇՈՐ ՉԱՓԵՐԻ ԳՈՒՄԱՐ

Ա.Ս.-ն հանցավոր խմբի կազմում կատարել է առանձնապես խոշոր չափերով խարդախություն՝ 30 անձից հափշտակելով 22 մլն 36 հզր ՀՀ դրամ գումար եւ գույք:

Մասնավորապես՝ Ա.Ս.-ն իր կողմից հիմնադրված, սակայն առանց պետական գրանցման մի շարք իբր վարկային կազմակերպություններ ներկայացող գրասենյակների անունից ֆեյսբուքյան սոցիալական ցանցում գրանցված էջերի վճարովի թիրախային գովազդի միջոցով տարածել է շահավետ պայմաններով վարկեր տրամադրելու վերաբերյալ հայտարարություններ:

Հանցավոր խմբի անդամները հիշյալ հայտարարությունների հիման վրա իրենց դիմած եւ վարկեր ստանալու ցանկություն հայտնած անձանց հրավիրել են իբր վարկերի տրամադրման միջնորդ կազմակերպության գրասենյակներ եւ ներկայացրել, թե 30-35 տոկոս միջնորդավճարի դիմաց կարող են կազմակերպել տարբեր բանկերից եւ վարկային կազմակերպություններից նրանց անվամբ վարկային գումարների ուղղակի կամ անուղղակի ձեւով ստացումը:

Այնուհետեւ, հանցավոր խմբի անդամները հիշյալ քաղաքացիներին ուղեկցել են տարբեր բանկեր, վարկային եւ առեւտրային կազմակերպություններ, որտեղ վերցրել են նրանց տրամադրված վարկային գումարները, ապրանքները կամ դրանց ստացման կտրոնները՝ խաբեությամբ ներկայացնելով, թե անհրաժեշտ է կատարել վերջնահաշվարկներ, իրացնել ձեռք բերված ապրանքները, հաշվարկել միջնորդավճարների չափը, որից հետո ամբողջությամբ կտրամադրեն խոստացված գումարները, սակայն չեն տրամադրել եւ հափշտակել են:

Ա.Ս.-ն եւ խմբի մյուս անդամներն իրենց հանցավոր մտադրությունն իրականացնելու ընթացքում օգտագործել են նաեւ խաբեության այլ եղանակներ: Մասնավորապես՝ պարզել են իրենց դիմած քաղաքացիների անձնական տվյալները եւ նրանց անվամբ վճարային համակարգում գրանցել հաշիվներ, որոնց միջոցով վարկային ընկերությունից առցանց ստացել են վարկային գումարներ, սակայն, չարաշահելով քաղաքացիների վստահությունը, գումարները նրանց չեն տրամադրել, այլ, հասանելիություն ունենալով գրանցված հաշիվներին, կանխիկացրել եւ հափշտակել են:

Բացի այդ, հանցավոր խմբի անդամներն իրենց դիմած անձանց ուղեկցել են բանկի տարբեր մասնաճյուղեր, խաբեությամբ հաճախորդներից ստացել են բանկի հեռախոսային հավելվածի մուտքի տվյալները, որոնց միջոցով առցանց ստացած վարկային գումարները փոխանցել են այլ անձանց հաշիվներին եւ հետագայում կանխիկացնելու եղանակով հափշտակել դրանք:

Բացի այդ, Ա.Ս.-ն եւ Ա.Բ.-ն վարձակալել են 2 գրասենյակային տարածք՝ դրանցում առկա գույքով՝ իբր վարկային կազմակերպության զանգերի կենտրոնի գործունեությունն իրականացնելու համար: Գրասենյակային տարածքների վարձակալության ժամկետի ավարտից հետո սեփականատերերը պարզել են, որ վարձակալող անձինք հափշտակել են գրասենյակային գույքը:

Ա.Ս.-ի նկատմամբ հարուցվել է հանրային քրեական հետապնդում՝ Քրեական օրենսգրքի 255-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով (առանձնապես խոշոր չափերով խարդախությունը) եւ 256-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով (մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ վստահված գույքը հափշտակելը) (երկու դրվագ):

Քրեական վարույթը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է հսկող դատախազին՝ այն հաստատելու եւ դատարան ուղարկելու միջնորդությամբ:

ԻՐԱՎԻՃԱԿ

ՁՆԱԳՆԴԻԿՈՎ ՀԱՐՎԱԾԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՉԱՓԱՀԱՍԻ ԵՆ ԴԱՆԱԿԱՀԱՐԵԼ

Արտակարգ վիճակ է եղել Նորք Մարաշում: Թետրվարի 21-ին՝ ժամը 23:07-ի սահմաններում, Մարաշից Սուրբ Աստվածամայր հիվանդանոց 16 տարեկան անչափահաս երեխա են դանակահարված տեղափոխել: Հիվանդանոց տեղափոխված երեխան Ս. Ագ-ն է եղել:

«Ժողովուրդ» օրաթերթին հասած լուրերի համաձայն՝ իրավապահները պարզել են, որ առատ ձյան ժամամակ բակում ձնագնդիկ են խաղացել ու անչափահասներից մեկը՝ Ս. Ն.-ն, պատահաբար ձնագնդիկով հարվածել է Հ. Սգ-ին: Արդյունքում սկսվել է վեճ եւ Հ. Սգ-ն դանակով հարվածել է Ս. Ա.-ին:

Ավելի ուշ քննչական կոմիտեն հաստատեց «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունները. «Փետրվարի 20-ի ժամը 23:07 ին ոստիկանության օպերատիվ կառավարման կենտրոն հաղորդում է ստացվել «Սուրբ Աստվածամայր» ԲԿ-ից, որ դանակով հարվածելու հետեւանքով «ձախ ազդրի կտրած-ծակած վերք» ախտորոշմամբ իրենց մոտ է տեղափոխել 16-ամյա մի քաղաքացի. հայտնում են ոստիկանությունից: Համայնքային ոստիկանության Մարաշի բաժնի ծառայողների ձեռնարկված միջոցառումների արդյունքում պարզվել է, որ Տիգրան Մեծի պողոտայի շենքերից մեկի բակում վիճաբանություն է տեղի ունեցել, որի արդյունքում 16-ամյա երիտասարդին դանակահարել է 49-ամյա հարեւանը:

Նա ձերբակալվել եւ տեղափոխվել է Համայնքային ոստիկանության Մարաշի բաժին: Ձեռնարկվում են միջոցառումներ հանցագործության գործիք դանակը հայտնաբերելու ուղղությամբ: Տղամարդը եւ կազմված փաստաթղթերը ներկայացվել են նախաքննական մարմին»:

ԱՇԱԿԵՐՏԸ ՔԱՆՈՆՈՎ ՀԱՐՎԱԾԵԼ Է ՓՈԽՏՆՕՐԵՆԻՆ

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ փետրվարի 18-ին խառնաշփոթ իրավիճակ է եղել Վանաձորի 7 հիմնական դպրոցում:

Լուսինե Աղաջանյանը, որը Վանաձորի Ա. Բակունցի անվան 7 հիմնական դպրոցի փոխտնօրենն է, ահազանգել է իրավապահներին ու հայտնել, որ դպրոցի 5 Ա դասարանի աշակերտ Ա. Պ-ն հաճախակի կոնֆլիկտներ է ունենում դպրոցի աշակերտների հետ: Նա փետրվարի 12-ին վիճաբանել է համադասարանցի Գ. Շգ-ի հետ, որի ընթացքում շշով ջուր է լցրել վերջինիս վրա:

Արդյունքում, «Ժողովուրդ» օրաթերթին հասած լուրերի համաձայն, մանկավարժական խորհրդի նիստում որոշվել է Ա. Պետրոսյանին վարքի համար տալ նկատողություն, որից հետո Ա. Պետրոսյանի նկատողությունը կարդալու համար հանձնաժողովի անդամներով մուտք են գործել դասարան: Դրանից հետո Ա. Պետրոսյանը վիրավորական արտահայտություններ է հնչեցրել հանձնաժողովի հասցեին, վերցրել սեղանին դրված քանոնը, նետել փոխտնօրեն Լ. Աղաջանյանի վրա եւ վերջինիս հասցեին հնչեցրել հայհոյանք:

Դեպքով զբաղվում է Քննչական կոմիտեն:

Կազմված փաստաթղթերը փոխանցվել են քննչական վարչություն:

Նյութերը՝ ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ

ՔՐԵԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ

ԱՊՕՐԻՆԻ ԾԱՌԱՀԱՏՄԱՆ ԴԵՊՔ

Փետրվարի 19-ին Համայնքային ոստիկանության Իջեւանի բաժնի ծառայողները Գետահովիտ բնակավայրում շրջագայության ժամանակ, իրացնելով օպերատիվ տեղեկությունները, 30-ամյա երիտասարդի տան հարակից ավտոտնակի մոտ հայտնաբերել են բոխեանի, հաճարենի եւ կաղնի տեսակի՝ ընդհանուր 14 խմ փայտանյութ: Հայտնում են ՀՀ ՆԳՆ ոստիկանությունից:

Գետահովիտցի երիտասարդը փայտանյութի վերաբերյալ փաստաթուղթ չի ներկայացրել:

Կազմված փաստաթղթերը ներկայացվել են Տավուշի մարզային քննչական վարչություն:

ԱՊՕՐԻՆԻ ԶԵՆՔ ԶԻՆԱՄԹԵՐՔ

Հրազենի գործադրմամբ կատարվող հանցագործությունները, ծանր հետեւանքներից բացի, նաեւ ստանում են հանրային լայն հնչողություն՝ ձեւավորելով իրավիճակը առավել խիստ միջոցներով վերահսկելու ընդհանրական պահանջ:

Ապօրինի զենք-զինամթերքի շրջանառության դեմ պայքարը շարունակում է մնալ Ներքին գործերի նախարարության առաջնահերթություններից, եւ այս ուղղությամբ առավել ինտենսիվ են ինչպես հայտնաբերման եւ առգրավման, այնպես էլ բնակչության շրջանում տարվող բացատրական աշխատանքները:

Միայն փետրվարի 17-ին եւ 18-ին ՆԳՆ Քրեական եւ Համայնքային ոստիկանության տարածքային մի շարք ստորաբաժանումներում արձանագրվել է ապօրինի պահվող զենք-զինամթերքի կամավոր հանձնման 15 դեպք, երկու օրում հանձնվել է ընդհանուր՝ 91 միավոր զենք, մասնավորապես՝2 գնդացիր, 30 ինքնաձիգ, 2 նռնականետ, 20 մարտական եւ 1 գազային ատրճանակ, 11 ակոսափող եւ 25 ողորկափող հրացան:

Քրեական ոստիկանության Արմավիրի, Արագածոտնի, Կոտայքի, Գեղարքունիքի, Շիրակի, Վայոց ձորի մարզային եւ Երեւան քաղաքի վարչություններում կամավոր հանձնվել են գնդացիրներ, ինքնաձիգներ, նռնականետ, ակոսափող եւ ողորկափող հրացաններ, ատրճանակներ, նռնակներ եւ տարբեր տեսակի զինամթերք:

Համայնքային ոստիկանության Սեւանի, Ճամբարակի, Տավուշի, Ախուրյանի, Կապանի, Արմավիրի, Նոյեմբերյանի բաժիններում էլ արձանագրվել են ինքնաձիգներ, հրացաններ, նռնականետ, ատրճանակներ, նռնակներ եւ ռազմամթերք կամավոր հանձնելու դեպքեր:

Նշենք, որ միայն այս տարվա հունվարի 1-ից փետրվարի 18-ը ՆԳՆ Քրեական ոստիկանության եւ Համայնքային ոստիկանության, ինչպես նաեւ Պարեկային ծառայության կողմից հայտնաբերվել, առգրավվել, նաեւ՝ կամավոր հանձնվել է ընդհանուր 398 միավոր զենք, անցած տարվա նույն ժամանակահատվածի համեմատ՝126-ով ավելի:

Ապօրինի պահվող զենք-զինամթերքի հայտնաբերման եւ առգրավման գործընթացը հետեւողականորեն շարունակվում է:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ փետրվարի 20-ից 21-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումների կողմից բացահայտվել է հանցագործության 112 դեպք, որից 5-ը՝նախկինում կատարված:*

ՄԱՐԶ

ԲՈՂՈՔՈՒՄ ԵՆ ԱՇԽԱՏԱՆՔԻՑ

Տավուշի բնակիչներից բողոքներ ենք ստացել, որ մարզի բժշկական կենտրոններում աշխատում են շտապօգնության մեկական բրիգադներ, երբ բնակիչները շտապօգնության ծառայության բրիգադ են կանչում, բիգադը կանչով նույն համայնքի այլ բնակավայրում է գտնվում, համայնքի հեռավոր բնակավայրերից մեկում: Այդ պատճառով շատ բնակիչներ ստիպված իրենց հիվանդին տաքսի ավտոմեքենայով են հիվանդանոց հասցնում: Այս խնդիրը առավել սուր է ավելի քան 43 հազար բնակիչ ունեցող Իջեւան համայնքում: Ըստ գործող օրենսդրության՝ սպասարկվող յուրաքանչյուր 20 հազար բնակչի հաշվով պետք է գործի շտապ օգնության մեկական բրիգադ: Տավուշի բնակիչները բողոքում են, որ ի տարբերություն Երեւանի՝ Տավուշի մարզի շտապ օգնության բրիգադներում ընդգրկված են ոչ թե բժիշկներ, այլ բուժքույրեր, որոնք մասնագիտական բավարար գիտելիքներ չունեն վատ վիճակում գտնվող հիվանդի վիճակը ճիշտ գնահատելու, ըստ այդմ՝ համարժեք շտապ բուժօգնություն ցուցաբերելու համար: Այս խնդիրների վերաբերյալ տեղեկատվական հարցում ենք արել Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին, ում ենթակայությամբ գործում են մարզի պետական բուժհիմնարկները: Նրա պատասխանը չի փարատում բնակիչների շրջանում առկա մտահոգությունները. «Իջեւանի, Բերդի եւ Նոյեմբերյանի բժշկական կենտրոնները շտապ բժշկական օգնություն են ցուցաբերում իրենց տարածաշրջանի ողջ ազգաբնակչությանը (Իջեւանի տարածք -43720 բնակիչ, Բերդի տարածք- 26700 բնակիչ, Նոյեմբերյանի տարածք-26851 բնակիչ): Յուրաքանչյուր բժշկական կենտրոնում գործում է 1 շտապօգնության բրիգադ՝ անհրաժեշտության դեպքում եւս 2-րդ բրիգադի արագ ընդգրկման հնարավորությամբ: Շտապ օգնության բրիգադի հերթափոխը իրականացվում է բժիշկների կամ ֆելդշերների հերթապահությամբ (կախված կադրերի քանակից, գրաֆիկից եւ կանչի նախնական ախտորոշումից)»:

ՈՌՈԳՄԱՆ ՋՈՒՐ ԿՏԱՆ

Տավուշի ջրօգտագործողների ընկերությունը 2021թ.-ից ղեկավարող Ռոման Ահարոնյանը հայտնեց, որ 2024թ. մայիսի 27-ի ջրհեղեղից, գետերի մակարդակի բարձրացումից ավելի շատ վնաս են կրել Նոյեմբերյան համայնքում, Դեբեդում հովտի ոռոգման համակարգերը: Նա ասաց, որ իրենք արագ վերականգնել են համակարգում վնասները, այդ գործում օգնություն է ցուցաբերել Ջրային կոմիտեն: Այդ գործով սկզբնական փուլում «Տավուշ» ՋՕԸ-ն մոտ 12 միլիոն դրամի աշխատանքներ է կատարել: Ռ. Ահարոնյանը հայտնեց, որ Դեբեդի հովտի բնակավայրերում կան հողագործներ, ովքեր զլանում են մատակարարված ոռոգման ջրի դիմաց վճարել, ՋՕԸ-ն դատական հայցեր կներկայացնի նրանց դեմ: Հարցրի, թե այս տարի ե՞րբ է սկսվելու ոռոգման սեզոնը: Ահարոնյանն ասաց, որ Նոյեմբերյանի Հաղթանակ գյուղի տարածքում «Սպայկա» ընկերությունը բողկ է մշակում, մարտին ընկերությանը ոռոգման ջուր կտրվի:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ՈՐՈՇՈՒՄ

ԹՎԱՅԻՆ ԴՐՈՇՄԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ

Հայաստանում 2023 թվականից փուլային եղանակով ներդրվում է ապրանքների թվային դրոշմավորման գործընթացը: Նույնականացման միջոցներով արդեն իսկ դրոշմավորվում են ծխախոտային արտադրանքը, ալկոհոլային ապրանքները, փաթեթավորված խմելու ջուրը:

Կառավարության որոշմամբ մարտի 1-ից թվային դրոշմավորումը պարտադիր կլինի նոր ապրանքային խմբերի համար. գազավորված եւ ոչ գազավորված ըմպելիքներ, ոչ ալկոհոլային խմիչքներ, մակարոնեղեն, թեյը եւ սուրճ, կենդանական եւ բուսական յուղեր, շոկոլադ եւ կակաո պարունակող սննդամթերք, պահածոյացված մթերք, գարեջուր եւ գարեջրային խմիչքներ (ԱՏԳ ԱԱ ծածկագրեր՝ 0901, 0902, 0903 00 000 0, 1504, 1505 00, 1506 00 000 0, 1507, 1508, 1509, 1510, 1512 11 910, 1512 19 900, 1515, 1516 20 960 2, 1517, 1602, 1604, 1605, 1806, 1901, 1902, 1903 00 000 0, 1904, 2001, 2002, 2003, 2004, 2005, 2006 00, 2007, 2008, 2009, 2101, 2202, 2203 00, 2209 00): Թվային դրոշմավորման գործընթացը կշարունակվի փուլերով. հունիսի 1-ից՝ կաթնամթերք, մսամթերք, երշիկեղեն եւ կենդանիների կեր (ԱՏԳ ԱԱ ծածկագրեր՝0207, 0209, 0210, 0401, 0402, 0403, 0404, 0405, 0406, 1601 00, 1603 00, 2105 00, 2309): Սեպտեմբերի 1-ից՝նավթավերամշակման արտադրանք, ներկանյութեր, լաքեր եւ չորարարներ (ԱՏԳ ԱԱ ծածկագրեր՝2710 19 710 0, 2710 19 750 0, 2710 19 820 0, 2710 19 840 0, 2710 19 860 0, 2710 19 880 0, 2710 19 920 0, 2710 19 940 0, 2710 19 980 0, 3203 00, 3204, 3205 00 000 0, 3206, 3207 10 000 0, 3208, 3209, 3210 00, 3211 00 000 0, 3212, 3403 19 100 0, 3403 19 900 0, 3403 99 000 0): Իսկ 2026 թվականի հունվարի 1-ից՝դեղեր, վիտամիններ, օծանելիք, կոսմետիկան, հիգիենայի եւ խնամքի միջոցներ (ԱՏԳ ԱԱ ծածկագրեր՝2936, 3002 41 000 0, 3002 42 000 0, 3004, 3006 30 000 0, 3006 60 000 , 3303 00, 3304, 3305, 3306, 3307, 3401, 3402):

Արտադրող կամ ներմուծող ընկերությունները դրոշմավորման ենթակա ապրանքներն օտարումից առաջ դրոշմավորվում են նույնականացման միջոցներով՝ Դատա մատրքիս երկչափ շտրիխ կոդով: Այն փակցվում կամ տպագրվում է ապրանքի վրա եւ անհատական է ապրանքի յուրաքանչյուր միավորի համար, որից հետո այն գրանցվում է E-mark համակարգում եւ վերջնական սպառման ժամանակ սկանավորվում վաճառքի կետի դրամարկղում՝ համակարգին տեղեկացնելով ապրանքի շրջանառությունից դուրս գալու մասին: Նույնականացման նշաններով դրոշմավորումն ապահովվում է ապրանքների շարժի հետագծելիություն՝ արտադրությունից կամ ներմուծումից մինչեւ վերջնական սպառում: Դրոշմավորման նոր համակարգը, միաժամանակ, վարչարարության բարելավման լրացուցիչ գործիք է:

Տնտեսվարողներն իրենց ցանկությամբ դրոշմավորման համար սահմանված պարտադիր ժամկետից շուտ եւս կարող են անցնել դրոշմավորման նոր համակարգին: Միաժամանակ, մինչեւ պարտադիր դրոշմավորման ներդրման ժամկետը ներկայացրած հայտերի հիման վրա ստացված դրոշմապիտակները տնտեսվարողները կարող են օգտագործել մինչեւ դրանց սպառումը: Նույնականացման միջոցներով դրոշմավորումն իրականացնելու համար արտադրող կամ ներմուծող ընկերությունը պետք է էլեկտրոնային եղանակով գրանցվի ազգային օպերատորի՝ E-mark համակարգում՝ ստանալով համակարգի հասանելիություն:

ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹՅՈՒՆ

ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԻ ՆՈՐ ՏԵՍԱԿ Է ՀԱՅՏՆԱԲԵՐՎԵԼ

Չինացի վիրուսաբանները հայտնաբերել են չղջիկների նոր կորոնավիրուս, որը կարող է մարդկանց վարակել այն նույն ճանապարհով, ինչ COVID-19-ը:

South China Morning Post թերթը հաղորդել է, որ այդ վիրուսը HKU5 կորոնավիրուսի նոր գիծն է, որն առաջին անգամ հայտնաբերվել է ճապոնական մեծաչղջիկի մոտ Հոնկոնգում: Հրատարակությունը նշում է, որ հետազոտությունը կատարվել է Գուանչժոուի լաբորատորիայում՝ Գուանչժոուում Չինաստանի գիտությունների ակադեմիայի բաժանմունքի, ինչպես նաեւ Ուհանի համալսարանի եւ Ուհանի վիրուսաբանության ինստիտուտի մասնագետների հետ համատեղ: Աշխատանքը ղեկավարել է չինացի հայտնի վիրուսաբան Շի Չժենլին:«Մենք հայտնում ենք HKU5-CoV-ի առանձին գծի (2-րդ գծի) հայտնաբերման եւ առանձնացման մասին, որը կարող է օգտագործել ոչ միայն չղջիկի ACE2-ը (խմբ.՝ մեմբրանային սպիտակուցը), այլեւ մարդու ACE2-ը եւ կաթնասունների ACE2-ի զանազան օրթոլոգներ (խմբ.՝ գեներ, որոնք հայտնաբերվել են ընդհանուր ծագմամբ տարբեր տեսակների մոտ)», - մեջբերում է հրատարակությունը վիրուսաբանների հայտարարությունից:Հետազոտողները պարզել են, որ չղջիկների նմուշներից անջատված վիրուսը կարող է ախտահարել մարդու բջիջները: «Չղջիկների մերբեկովիրուսները ներկայացնում են մարդկանց մեջ տարածվելու մեծ վտանգ ուղղակի փոխանցման կամ միջանկյալ կրողների միջոցով», - զգուշացնում են նրանք: Շի Չժենլիի թիմը նշում է, որ նոր վիրուսը, որն ստացել է HKU5-CoV-2 անվանումը, «կարող է ունենալ ավելի լայն շրջանակի կրողներ եւ միջտեսակային վարակման ավելի մեծ ներուժ»: Այդուհանդերձ, վիրուսաբաններն ասում են, որ առայժմ խուճապի մատնվելու պատճառներ չկան, քանի որ «մարդկային պոպուլյացիաներում HKU5-CoV-2-ի հայտնվելու վտանգը հարկ չկա չափազանցնել»: Սակայն չինացի մասնագետները վստահ են, որ պահանջվում է «ավելի մանրակրկիտ հետազոտություն»:

● *Անցած 1 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 18 պատահար. 26 մարդ ստացել է, տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

ՈՒԶՈՒՄ ԵՆ ԿԱՐԳԱՎՈՐԵԼ ՈՒԼՈՐՏԸ

«Հայաստանի արտոնագրված թարգմանիչների միություն» հասարակական կազմակերպությունը հրավիրել է ընդհանուր ժողով, որի ժամանակ քննարկվել են նոտարական թարգմանությունների հետ կապված մի շարք հարցեր: Շատ հաճախ նոտարական գործողություններին մասնակցող թարգմանիչները բախվում են բազմաթիվ խնդիրների՝ մասնավորապես իրավական եւ լեզվական թարգմանչական ճշգրտումների հետ կապված: Մյուս խնդիրը վերաբերում է անբարեխիղճ մրցակցության կանոններին: Թարգմանիչները իրենք են որոշում, թե որքան գումար վերցնեն իրենց մատուցած ծառայությունների համար: Քաղաքացիները տարակուսում են, թե ինչու մեկ փաստաթուղթ թարգմանելը մի տեղ անում են այլ գնով, իսկ այլ տեղում՝ դրանից էժան կամ թանկ: Այս անբարեխիղճ մրցակցությունը մեծապես վնասում է որակյալ աշխատանք կատարող թարգմանիչներին:

Ընդհանուր ժողովի ժամանակ արտոնագրված թարգմանիչները որոշում են կայացրել մշակել ընդհանուր վարքագծի կանոններ թարգմանչական գործ անող սուբյեկտների համար, մշակել եւ հաստատել համագործակցության ռազմավարություն նոտարական պալատի, փաստաբանական պալատի, Արդարադատության նախարարության եւ շահագրգիռ մարմինների հետ: Նախատեսվում է Լեզվի տեսչության հետ կազմել որոշակի տարակարծությունների տեղիք տվող անվանումների եւ այլ բառերի միասնական կիրառման կանոններ: ՀԿ-ն կկազմակերպի տարաբնույթ սեմինարներ եւ թրեյնինգներ նոտարական թարգմանիչների համար եւ ինտենսիվ կզբաղվի թարգմանիչների իրավունքների պաշտպանության հարցերով:

Ընդհանուր ժողովի նիստով դադարեցվել կազմակերպության գործող նախագահ Սարգիս Ամիրխանյանի լիազորությունները եւ նոր նախագահ է ընտրվել իրավաբան Տաթեւ Ավագյանը:

ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Այն կուսակցությունները եւ կուսակցությունների դաշինքները, որոնք ցանկություն ունեն մասնակցել մարտի 30-ին կայանալիք Փարաքար եւ Գյումրի համայնքների ավագանու արտահերթ ընտրություններին, գրանցման ու ընտրական ցուցակների էլեկտրոնային եղանակով ձեւավորման համար պետք է օգտահաշիվ ստանալու դիմում ներկայացնեն Կենտրոնական ընտրական հանձնաժողով:

Սա վերաբերելի է նաեւ այն կուսակցություններին ու դաշինքներին, որոնք նախորդող ընտրություններին մասնակցել են եւ ունեցել իրենց օգտահաշիվները. օգտահաշիվների ակտիվացման համար պետք է դիմում ներկայացնեն ԿԸՀ:

ԵՐԵԿ ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՎԻ ՕՐՆ ԷՐ

ԳՈՐԾՈՂ ՎԱՐՉԱԿԱԶՄԸ ՀԱՐՎԱԾՈՒՄ Է ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻՆ

«Հայաֆվե» ազգային բաղադրատիպային միավորումը Մայրենիի միջազգային օրվա կապակցությամբ բարձրացնում է մի շաս կարեւոր հիմնահարց, որը կապված է հայոց լեզվի դերի, հեղինակության հետ հայասանյան գիտության ոլորտում: Այս մասին, երեկ՝ փետրվարի 21-ին, մամուլի ասուլիսի ժամանակ նշեց «Հայաֆվե» ազգային բաղադրատիպային միավորման անդամ Մենուա Սողոմոնյանը:

«Մայրենիի միջազգային օրն առիթ է ասելու, որ Հայաստանի գործող վարչախումբը ոչ միայն իկր համար գերակայություն չի սահմանել հայոց լեզվի հեղինակության բարձրացումը, զարգացումը, այլ ընդհակառակը՝ մեր ազգային ինքնության մյուս հենասյուների շարքում՝ եկեղեցու, պատմության, մշակույթի եւ մյուս հենասյուների շարքում մեծ հարվածներ է հասցնում հայոց լեզվի վարկին ու հեղինակությանը: Խոսքը հետեւյալի մասին է, որ Գիտությունների ազգային ակադեմիայի ինստիտուտների, տարբեր բուհերի գիտական ստորաբաժանումների մեջ աշխատում են մարդիկ, որոնք ունեն առանձին կարգավիճակ, գիտաշխատողներ են, գիտական կադրեր են: Նրանք ժամանակ-առ-ժամանակ որոշակի պարբերականությամբ ատեստավորվում են, նրանք ունեն տարակարգ պաշտոնների եւ առաջխաղացման կամ տարակարգը պահպանելու համար ատեստավորվում են:

Մեկ տարի առաջ, 2023-ի դեկտեմբերի 21-ին, թաքուն, արագ կառավարությունը ընդունել էլ գիտական կադրերի ատեստավորման կարգը, եւ այդ կարգի մեջ ուշագրավ երկու կետ ենք նշում, համաձայն որոնց գիտնականների ատեստավորումը պետք է տեղի ունենա միայն Web of Science միջազգային գիտատեղեկատվական շտեմարանի եւ «Սկոպուս» հարթակում ընդգրկված գիտական հանդեսներում եւ հրատարակչություններում հրապարակվող հոդվածներ ունենալու հիման վրա:

Օրինակ, ավագ գիտաշխատողի համար սահմանված չափանիշն է, որ ինքը այդ գիտական հանդեսներում ունենա չորս հոդված: Ժամանակին այդ թիվը շատ ավելի մեծ էր, հետո մի փոքր ավելի քչացրել են»,- ասաց Մենուա Սողոմոնյանը: Նրա խոսքով՝ սա խնդիր է, որովհետեւ Հայաստանում թողարկվող գիտական հանդեսները ընդգրկված չեն այդ հարթակներում եւ հայալեզու այդպիսի հանդեսներ եւ հրատարակչություններ չկան, որ հայալեզու գիտական աշխատանքներ այդպիսի հրապարակեն ու ընդգրկված լինեն Տձopus կամ Web Science հարթակներում: Սա նշանակում է, որ երբ գիտնականի համար այսպիսի չափանիշ է դրվում, այդ մարդը հայերեն լեզվով գիտական աշխատանք չի գրում: Ինքը իր աշխատանքը տալիս է միայն անգլերենով, ռուսերենով»:

Նրա խոսքով՝ պետությունը իր առջեւ խնդիր չի դնում, որ մեր հանդեսները բարձրացնի այն մակարդակի, որ դրանք էլ դառնան միջազգային այդպիսի ցանցերի անդամ. «Այսպիսով հայերենը դադարում է գիտության լեզու լինելուց: Հայերենը վերածվում է զուտ կենցաղային լեզվի: Գիտության տարբեր բնագավառներում այդ լեզվամտածողությունը հայերենով չի ստեղծվում: Հայ գիտնականը այլեւս իր գիտական պրոդուկտը թողարկելիս հայերեն չի մտածում եւ հայերեն չի գրում»,-ասաց Մենուա Սողոմոնյանը:

Ա. Ս.

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ԴՐԱՄԱՀԱՎԱՔ ԵՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼ

«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը հայտնում է.

«Կուսակցությունը սկսում է դրամահավաք-արշավ Գյումրիի եւ Փարաքարի ավագանիների ընտրությունների քարոզարշավները եւ կազմակերպչական աշխատանքները ֆինանսավորելու նպատակով: Խնդրում ենք Ձեր նվիրատվությունները փոխանցել ստորեւ բերվող հաշվեհամարին:

Բանկը - Ամերիաբանկ ՓԲԸ

Հաշվեհամարը - 1570020902549000

Շահառու - «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցություն

ՆՊԱՏԱԿ * (* Պարտադիր է լրացման համար)

Նպատակ դաշտում պարտադիր նշել նվիրատուի՝

- Ազգանուն
- Անուն
- Հայրանուն
- Անձնագրի կամ նույնականացման քարտի տվյալներ

Հիշեցում. Նվիրատվության եւ անդամավճարների հանրագումարը մեկ ֆիզիկական անձի կողմից 1 տարվա ընթացքում չի կարող գերազանցել 2 500 000 ՀՀ դրամը (Երկու միլիոն հինգ հարյուր հազար): Իրավաբանական անձինք նվիրատվություն կատարել չեն կարող»:

ՎԵՐԱԴԱՐՁՎԵԼ Է ՀՈՂԱՄԱՍ

Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանի գլխավորությամբ 2025 թվականի փետրվարի 20-ին ամփոփվել են Գեղարքունիքի մարզի դատախազության 2024 թվականի աշխատանքները: Ամփոփմանը ներկա են եղել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Եղիազար Ավագյանը, Գեղարքունիքի մարզի դատախազ Գագիկ Այվազյանը, Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանը, Դատախազության գլխավոր քարտուղար Միհր Ափրիկյանը, Ներքին գործերի նախարարության, Ազգային անվտանգության ծառայության, Քննչական կոմիտեի մարզային կառույցների ղեկավարները, մարզի դատախազությունների դատախազները, այլք: Գագիկ Այվազյանը ՀՀ գլխավոր դատախազին է ներկայացրել Գեղարքունիքի մարզի դատախազության 2024 թվականի աշխատանքների մասին զեկուցագիրը եւ տեղեկացրել, որ 2024 թվականի ընթացքում մարզում նախաձեռնվել է 2315 քրեական վարույթ (2023 թվականին՝ 2328 քրեական վարույթ), դատախազների կողմից հաստատված մեղադրական եզրակացությամբ դատարան է հանձնվել 578 քրեական վարույթ՝ 615 անձի վերաբերյալ (2023 թվականին՝ 420 քրեական վարույթ՝ 470 անձի վերաբերյալ), դատարանում ավարտվել է 588 քրեական գործ՝ 640 անձի վերաբերյալ (2023 թվականին՝ 257 գործ՝ 284 անձի վերաբերյալ):

2024 թվականի ընթացքում քրեական վարույթներով պետությանն ու համայնքին պատճառված վնասից վերականգնվել է շուրջ 62,8 միլիոն դրամ (2023 թվականին՝ 2,3 միլիոն դրամ): Քննվող քրեական վարույթներից մեկով՝ դատախազի կողմից ներկայացված միջնորդագրի հիման վրա, Գեղարքունիքի մարզի Գավառ քաղաքի Գրիգոր Նարեկացու փողոց 3 հասցեում գտնվող՝ Գավառի մանկատանը պատկանող զբոսայգու 4 հազար 310 քմ մակերեսով հողամասի եւ դրա վրա գտնվող՝ ընդհանուր 511 քմ մակերեսով անշարժ գույքի նկատմամբ վերականգնվել է Հայաստանի Հանրապետության սեփականության իրավունքը: Գույքի շուկայականին մոտարկված կադաստրային արժեքը 29 միլիոն 82 հազար դրամ է: Գեղարքունիքի մարզի դատախազի տեղեկացմամբ, 2024 թվականին քրեական վարույթի շրջանակում՝ դատախազի կողմից ներկայացված միջնորդագրի հիման վրա, Գեղարքունիքի մարզի Մարտունի քաղաքի մարզադաշտի 6,5 հա հողամասի նկատմամբ գրանցվել է համայնքի սեփականության իրավունքը, վարձակալության իրավունք ունեցող անձը ծանուցվել է վարձակալության պայմանագրի լուծման մասին, միջոցներ են ձեռնարկվում հողամասում գտնվող 5 շինությունների նկատմամբ անձի սեփականության իրավունքի գրանցումն անվավեր ճանաչելու ուղղությամբ:

● «Ժողովուրդ» օրաթերթում եւ ArmLur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՄՇԱԿՈՒՅԹ

ՓԵՏՐՎԱՐԻ 21-Ը ՄԵԾ ՀԱՅՐԵՆԵՐԳՈՒԻ ՀԻՇԱՏԱԿԻ ՕՐՆ Է

«ՔԱՅԼԵՑԻ ԱՆՎԵՐՋ, ՉՀԱՍԱ ՍԱԿԱՅՆ...»

Այսօր հայ մեծագույն բանաստեղծ, դրամատուրգ, թարգմանիչ Վահագն Դավթյանի հիշատակի օրն է: 1922 թվականի օգոստոսի 15-ին Արևմտյան Հայաստանի Արաբկիր գյուղամաղաքում, որը գտնվում է Եփրատի վտակ Ուկեգետակի մոտ, ծնվեց աղագա մեծ պոետը, որը դարակեսին զարգացրեց հայ նորագույն բանաստեղծությունը, պոեմը, հայրեներգության անզուգական օրինակներով զարդարեց հայ գրականության պսակը. օգտվելով միջնադարյան ասքերի լավագույն օրինակներից՝ Դավթյանը ստեղծեց իր պոեմանման ասքերը՝ «Գինու երգը», «Ասք սիրո եւ սրի», «Թոնդրակեցիներ», «Ճերմակ ձիավորը», որոնք մի նոր՝ բարձրարժեք ուղենիշ սահմանեցին հայկական պոեմի ժանրում:



«Ժողովուրդ» օրաթերթն անդրադառնում է գրողի կյանքին եւ այն ստեղծագործություններին, որոնք անպայման արժե ընթերցել:

Դեռեւս 4 տարեկան էր Վահագն Դավթյանը, երբ ընտանիքը Տրապիզոնից նավով գաղթեց եւ ժամանակավորապես հաստատվեց Ռուսաստանի Կրասնոդար քաղաքում: Գաղթական արաբկիրցիները 1930-ականներին Երեւանում հիմնել էին Նոր Արաբկիր թաղամասը : Այդ մասին իմանալով՝ Վահագն Դավթյանը 1932 թվականին մոր եւ քրոջ հետ հաստատվեց Երեւանում (հայրը ավելի ուշ միացավ իրենց):

1941-1943 թվականներին Դավթյանը մասնակցեց հայրենական պատերազմին: Հետագայում սովորեց եւ ավարտեց ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետը:

Բանաստեղծի քնարերգությունը վերածնունդ է ապրում «ձնհալի» տարիներին:

1950-ականների իր ստեղծագործություններում նա խորացնում է քնարական մոտիվները՝ ծննդավայր («Ասում են հեռու Եփրատն է մի օր»), բնություն (գարնան, անձրեւի, լույսի պատկերներ), սիրային ապրումներ (հայտնվում է պարզ զգեստով աղջկա պատկերը, որ գնալով դառնում է Դավթյանի ամենասիրած պատկերներից մեկը), պատերազմական դրվագներ («Ձիավորը վերջին բարձունքի վրա» շարքը):

Դավթյանը ունի առանձին լավ բանաստեղծություններ, բայց նրա ստեղծագործությունների մնայուն որակը լավագույնս դրսեւորվել է միասնական շարքերի մեջ, որոնք գաղափարով ու կառուցվածքով պոեմ-շարքեր են:

Առաջին ամբողջական գործը «Գինու երգը» գրքի համանուն՝ «Գինու երգը» շարքն է՝գրված 1964-65 թվականներին:

Վերնագրից արդեն երեւում է, որ այն նվիրված է գինու ստեղծմանը: Դավթյանի շարքը Դանիել Վարուժանի ավանդների շարունակումն է: Վարուժանը գրեց «Հացին երգը», թեեւ անավարտ, եւ պատրաստվում էր ստեղծել «Գինիին երգը», որից պահպանվել է միայն ծրագիրը: Դավթյանը օգտագործել է եւ՛ «Հացին երգի» պոետիկան, եւ՛ վարուժանյան գինու պատկերները: Դրա շնորհիվ շարքում գործում է յուրատեսակ թաքնված հեթանոսականություն՝ զարթնող ու պտղավորվող բնություն, հողի ու արեգակի պաշտամունք:

Վահագն Դավթյանը 50-60-ականներին գրեց հայերգության լավագույն ժողովածուները՝ թե՛ բանաստեղծություններ, բանաստեղծական շարքեր, թե՛ պոեմներ:

Դրան զուգահեռ հեղինակեց նաեւ հուշեր, որոնցից լավագույնն է Վիլյամ Սարոյանի մասին պատմող «Բարի հսկան» (1979) գիրքը:

Անկախ սիրերգության, գրականագիտական հոդվածների եւ թարգմանությունների շքեղ օրինակներից՝ Դավթյանի բանաստեղծական աշխարհի առանցքում մշտապես մնաց հայրենիքը, մասնավորապես ծննդավայր Արաբկիրը.

«Ինչու՞ այնպես եղավ, որ աշխարհում
Ես կարող եմ հիմա ամենայն տեղ գնալ,
Լոկ չեմ կարող գնալ հայրենի տուն...», - գրում է Դավթյանը:

Կորսված հայրենիքի թեման մշտապես ուղեկցում է հայրենազուրկ գրողներին, որոնցից անմասն չէր եւ Վահագն Դավթյանը, ում հայրեներգությունը ընթերցողին հիշեցնում է՝ նա Հայկա զավակն է, Էջմիածնա որդին, Նոյյան թոռը, Դրախտի բնակիչը...:

Իր նամակներում Դավթյանը գրում է. «...Իսմ մանկությունը ցեղասպանությունից փրկված մարդկանց շրջանում է անցել, ներծծվել է այդ եղեռնագործության սարսափելի պատմություններով, եւ, թվում էր, թե ամեն ինչ հայտնի է ինձ, եւ այլեւս ոչինչ չի կարող ինձ զարմացնել կամ հուզել: Բայց ահա, երբ 1965-ին մի հսկայական հատորով հրատարակվեցին այդ ցեղասպանության փաստաթղթերը, ու երբ դրանք սկսեցի կարդալ, հիվանդացա, բառիս բուն իմաստով, հիվանդացա ոչ միայն հոգեպես, այլեւ ֆիզիկապես... Սկսվեց մի երկար ու ձիգ անքնություն, մղձավանջներն անընդհատ հետապնդում էին ինձ, ոչ մի կերպ չէի կարողանում ազատվել...»: Այս զգացումները չէին կարող իրենց արձագանքը չգտնել գրողի ստեղծագործություններում, որոնցից ամենաազդեցիկ գործերից է «Բայց ծնվեցի...» պոեմը: Դավթյանը վերհիշում է մանկությունը, ընտանիքը, սեփական ծննդի օրինակով նա հակադրում է հայ երեխայի ծնունդը աշխարհում ծնվող սովորական ծննդին.

«Մի սեւ ոճիր՝ մարդու կերպար ու տեսք առած
Ու ձեռքի մեջ առած ահեղ մի յաթաղան,
Բարձրացել էր, որ աշխարհում
Հայ մանուկներ աշխարի չգան,
Բարձրացել էր, որ չծնվեմ,
Բայց ծնվեցի...»:

Հիշատակի այս օրով պատահական չէ հիշել պոետի ծնունդը. ամեն ինչ վերարժեւորվում է սկզբով: Ընթերցե՛ք Վահագն Դավթյանի ստեղծագործությունները, դրանք մի քիչ ավելի հայ զգալու բանալիներից են:

ԱՆՆԱ ՍՐԱՊԻՈՆՅԱՆ

ՌՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ ԱՐԴԵՆ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ ԷԻՆ

ԻՆՉՈ՞Ւ ԵՊՀ-Ն ՎԵՐՔԻՆԸ ՀԱՅՏԱՐԱՐԵՑ ԴԱՍԵՐԻ ՀԵՌԱՎԱՐ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Երկրում եղանակային պայմաններով պայմանավորված՝ փետրվարի 20-ի ուշ երեկոյան կրթության գիտության մշակույթի և սպորտի նախարարությունը հայտարարեց, որ հանրապետության ողջ դպրոցներում փետրվարի 21-ի դասերը չեն կայանա: Դրանք այլ օր կլրացվեն: Քողոքն այն էր, որ դա հայտարարվեց գիշերը՝ 11:30-ին, համացանցի միջոցով:

Համալսարանների մասով, բացի ԵՊԲՀ-ի հայտարարությունից, ոչ մի այլ հայտարարություն չեղավ:

Երեկ՝ առավոտյան, երբ ուսանողներն ու դասախոսներն արդեն համալսարաններ էին շտապում, ԵՊՀ ռեկտոր Հովհաննես Հովհաննիսյանը ֆեյսբուքյան իր էջում գրեց, որ դասերը կանցկացվեն հեռավար:

Շատերը վրդովվել էին՝ ինչո՞ւ չէր կարելի այդ մասին ավելի վաղ հայտարարել, գոնե, երեկոյան:

ԵՊՀ մամուլի պատասխանատու Քնար Միսակյանն հայտարարել է. «Առավոտյան ռեկտորատի որոշում է եղել, դրա համար է ուշ հայտարարվել: Հենց որոշումը եղել է, արագ տարածվել է»:

ՄԱՐԶԱԿԱՆ

ՆԵՅՄԱՐԸ ՄԵԿՆԱԲԱՆԵԼ Է ՌԵԱԼԻ ԱՍՏՂԻ ԽԱՂԸ

«Սանտոսի» բրազիլացի հարձակվող Նեյմարը բարձր է գնահատել Մադրիդի «Ռեալում» հանդես եկող իր հայրենակից Ռոդրիգոյի խաղը:

«Այս տղան բացարձակապես անհավանական է խաղում», - գրել է Նեյմարը սոցցանցում՝ կցելով Ռոդրիգոյի լուսանկարը:

Մադրիդցիների հարձակվողն ընթացիկ մրցաշրջանում անցկացրած 34 խաղում դարձել է 12 գոլի եւ 9 գոլային փոխանցման հեղինակ:

Հիշեցնենք, որ ավելի վաղ մադրիդյան գրանդի անգլիացի կիսապաշտպան Ջուդ Բելինգհեմը 24-ամյա բրազիլացուն անվանել էր «Ռեալի» ամենատաղանդավոր խաղացողը:

ԿԳԼԽԱՎՈՐԻ ՆԱԽԿԻՆ ԱԿՈՒՄԲԸ

«Հերենվենի» գլխավոր մարզիչ Ռոբին վան Պերսին կգլխավորի Ռոտերդամի «Ֆեյենորդը»: Այս մասին հայտնում է The Athletic-ը:

Ըստ աղբյուրի՝ «Ֆեյենորդը» սկզբունքային համաձայնության է եկել 41-ամյա մասնագետի նշանակման հարցում՝ մանրամասները համաձայնեցնելով «Հերենվենի» հետ: Նշենք, որ վան Պերսին Ռոտերդամը ներկայացնող թիմի սան է:

Հիշեցնենք, որ Ռոբին վան Պերսին կարիերայի ընթացքում հանդես է եկել «Ֆեյենորդում», Լոնդոնի «Արսենալում», «Մանչեսթեր Յունայթեդում» եւ թուրքական «Ֆեներբահչեում»: Նա երկու անգամ նվաճել է Անգլիայի Պրեմիեր լիգայի «Ոսկե խաղակոշիկը» եւ հանդիսանում է Նիդեռլանդների առաջնության բոլոր ժամանակների լավագույն ռմբարկուն:

ՄԵՍՍԻ՞, ԹԵ՞ ՌՈՆԱԼԴՈՒ

Բրազիլացի լեգենդար նախկին հարձակվող Ռոնալդո Նազարիոն ընտրություն է կատարել «Ինտեր Մայամիի» արգենտինացի հարձակվող Լիոնել Մեսսիի եւ «Ալ-Նասրի» պորտուգալացի հարձակվող Կրիշտիանու Ռոնալդուի միջեւ:

Աշխարհի կրկնակի չեմպիոնն իրեն պորտուգալացու աստղից վեր դասեց, սակայն արգենտինացու դեպքում չկարողացավ նույն պատասխանը տալ: Նախկին հարձակվողի խոսքերը մեջբերում է AlbicelesteTalk-ը:

«Ռոնալդո՞ւ, թե՞ Ռոնալդու» Ռոնալդո

«Ռոնալդո՞ւ, թե՞ Մեսսի» Մեսսի

Հիշեցնենք, որ Ռոնալդոն հասցրել է խաղալ «Բարսելոնայում» եւ «Ռեալում», ինչպես նաեւ աչքի է ընկել «Ինտերում», «Միլանում» եւ այլ հեղինակավոր ակումբներում ելույթներով:

● Փետրվարի 28-ին՝ժամը 19:00-ին, Երեւանի պետական կամերային թատրոնում կցուցադրվի «Հոբելյանական հաճախորդ» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝3000-8000 դրամ:

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱԾՎԱԾ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Ի՞նչ փաստաթղթեր են անհրաժեշտ ՀՀ քաղաքացիներին որպես որդեգրել ցանկացող անձ հաստատվելու համար:

Նաիրա Հարությունյան (37 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող այն քաղաքացիները, ովքեր ցանկանում են երեխա որդեգրել, դիմում են իրենց բնակության վայրի մարզպետարան (Երեւանի քաղաքապետարան)՝ներկայացնելով՝

1) անձը հաստատող փաստաթուղթ,

2) բնակարանային պայմանների մասին տեղեկանք՝ տրված բնակության վայրից,

3) ընտանիքի կազմի մասին տեղեկանք՝ տրված բնակության վայրից,

4) զբաղեցրած պաշտոնի, աշխատավարձի եւ այլ եկամուտների մասին տեղեկանք,

5) անձի պատշաճ վարքագծի մասին անձնական երաշխավորություն՝ տրված կազմակերպության կամ առնվազն երեք անձանց կողմից,

6) բժշկական փաստաթուղթ այն մասին, որ երեխա որդեգրել ցանկացող անձը հիվանդ չէ ՀՀ կառավարության 2005 թվականի մայիսի 5-ի N 517-Ն որոշմամբ հաստատված ցանկում ներառված հիվանդություններից որեւէ մեկով,

7) ամուսնության վկայականի պատճենը (եթե ամուսնացած է),

8) երեխայի՝ ամուսիններից մեկի կողմից որդեգրման դեպքում մյուս ամուսնու գրավոր համաձայնությունը՝ բացառությամբ այն դեպքերի, երբ ամուսինները դադարեցրել են ամուսնական հարաբերությունները, մեկ տարվանից ավելի համատեղ չեն ապրում, եւ մյուս ամուսնու բնակության վայրն անհայտ է,

9) տեղեկանք որդեգրման պահին մարդու դեմ ուղղված կամ հասարակական կարգի եւ բարոյականության դեմ ուղղված ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության համար դատվածություն չունենալու մասին:

ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Եթե որդեգրել ցանկացող Հայաստանի Հանրապետության քաղաքացին ունի նախապես ընտրած որդեգրման ենթակա երեխա, որի կապակցությամբ առկա է ծնողների գրավոր համաձայնությունը, ապա նա դրա մասին նշում է իր դիմումի մեջ:

Էջը՝ ԱԼՎԱՐԴ ԿՈՇԿԱԿԱՐՅԱՆԻ

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Հետաքրքիր է իմանալ, թե ինչպես է կարելի է մաքրել անձի վարկային պատմությունը:

Տիգրան Մանուկյան (38 տարեկան)



ՊԱՏԱՍԽԱՆ. Տեղեկացնում ենք, որ վարկային տեղեկատվությունը կամ այսպես կոչված «վարկային պատմությունը» վարկառուի վերաբերյալ վարկային տեղեկատվությունն է, որը բնութագրում է վերջինիս կողմից ստանձնած վարկային պարտավորությունների մասով պարտքերը, վճարումները, վճարումների սովորությունները կամ պարտավորությունների կամ դրանց կատարման վերաբերյալ տեղեկատվություններ:

Գործնականում «վատ վարկային պատմությունը մաքրել» նշանակում է ընթացիկ վարկային զեկույցներում չունենալ խնդրահարույց (ժամկետանց կամ սուբյեկտիվ չափանիշներով դասակարգված) վարկեր: Վարկային բյուրոն չպետք է ներառի վարկային զեկույցում վարկային տեղեկատվության սուբյեկտի վերաբերյալ վարկային զեկույցի տրամադրման պահին նախորդող հինգ տարուց ավելի վարկային տեղեկատվություն:

Ֆինանսական համակարգի հաշտարար

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Հինգ տարին ավարտվելուց հետո նշված տեղեկատվությունը արխիվացվում է: («Վարկային տեղեկատվության շրջանառության եւ վարկային բյուրոների գործունեության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ ենթակետ):

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

Երեւանում տեղացող ձյունն ու Մայր Հայաստան արձանը. թերեւս խորհրդավոր ու գեղեցիկ նկար է ստացվել:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	-4 -11 -3 +2
Կոտայքի լեռներ	-6 -10 -2 +2
Կոտայքի նախալեռներ	-4 -9 0 +3
Գեղարքունիք	-6 -11 -3 +1
Լոռի	-7 -10 -1 +4
Տավուշ	-3 -6 0 +2
Արագածոտնի լեռներ	-9 -14 -2 +4
Արագածոտնի նախալեռներ	-1 -3 -1 +5

Արարատ	0 -5 +1 +4
Արմավիր	-3 +1 +4 +6
Վայոց ձորի լեռներ	-4 -7 +2 +4
Վայոց ձորի նախալեռներ	-2 +2 +4 +6
Սյունիքի հովիտներ	-6 -9 0 -4
Սյունիքի նախալեռներ	0 +3 +7 +10
ԼՂՀ	0 +2 +6 +8
Երեւան	-3 -9 0 +3

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **21.2.2025**
Տպաքանակ՝ 3968
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*